602

1. Այսօր ցնծում են մեր սրտեր,
Երգում ենք ալելուիաներ
Եվ ավետում ենք լուրն այս բարի՝
Ծնվեց Փրկիչն աշխարհի:

Ավետեք լուրն այս բարի,
Մանուկներ (դուք սուրբեր) ողջ աշխարհի,
Միացե՛ք ուրախ երգով
Մեծ խմբին հրեշտակների,
Որ երգում են անդադար՝
Փառք Էմմանուելին,
Ալելուիա (3): (2)

2. Հիսո՛ւս, արքաների Արքա,
Հիսո՛ւս, խնդրում ենք Քեզ հիմա,
Թող որ ծնունդով Քո բարի
Մեր հայ ազգը ապաշխարի:
Ինչպես, Հիսո՛ւս, ծնվեցիր մսուրում,
Ծնվի՛ր, Հիսո՛ւս, ամեն հայի սրտում,
Եվ թող սերդ թագավորի
Ամեն հայի ընտանիքում:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025